

Ձեռնարկությունների Եվրոպական Ցանց Հայաստան



ՏԵՂԵԿԱԹԵՐԹ #6

Հունիս 2017

Երևան, Հայաստան



Բովանդակություն

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ.....	3
Սննդի վերամշակում	3
Տեքստիլ արտադրություն	6
Շինարարություն	8
R&D	10
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	12
Կոսմետիկա	14
Դեղագործություն	15
Այլ ոլորտներ	16
Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ.	19
Եվրոպական նորություններ և միջոցառումներ.....	21

Գործարար համագործակցության առաջարկներ և հարցումներ

Հայաստանյան ՓՄՁ-երի միջազգային գործարարության զարգացման և արտասահմանյան գործընկերների հետ կապեր հաստատելու նպատակով ՁԵՑ Հայաստանը ուշադրության է ներկայացնում գործարար համագործակցության հետևյալ առաջարկները.

Մենդի վերամշակում



Գործարար համագործակցության առաջարկներ

Մսամթերքի և նրբերշիկի կիսաֆաբրիկատներ արտադրող գերմանական ընկերությունը ցանկանում է դիստրիբյուտորների կամ առևտրային գործակալությունների հետ կնքել ծառայությունների մատուցման պայմանագիր

Մենդամթերք արտադրող գերմանական ավանդական ընկերությունը որը ղեկավարվում է սեփականատիրոջ կողմից, արտադրում է մսամթերքից պատրաստված կիսաֆաբրիկատներ: Արտադրանքը փաթեթավորված է մեծածախ առևտրի և սննդի ծառայության սպասարկման համար, չունի հավելումներ, գունանյութեր, ուժեղացուցիչներ և համապատասխանում է հաճախորդների և շուկայի բոլոր պահանջներին: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ առևտրային համաձայնագիր կամ ապրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BODE20151209001

Մնունդ և խմիչք արտադրող իտալական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների և գործակալների

Իտալական ընկերությունն արտադրում է բազմատեսակ իտալական սնունդ և խմիչք (նախուտեստներ, շոկոլադ, քաղցր մածուկներ, սուրճ, մուրաբա, մակարոն, թանձրուկներ, ձիթապտղի յուղ, քացախ, գինիներ, ալկոհոլային խմիչքներ): Ընկերությունը փնտրում է ապրանքը շուկայում տարածողների կամ գործակալների (ովքեր համագործակցում են խանութների և բարձրակարգ հյուրանոցների, ռեստորանների ու սրճարանների հետ)՝ առևտրային համաձայնագիր կամ ապրանքի տարածման պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOIT20170214001

Ֆրանսիական պանիր արտադրողը փնտրում է դիստրիբյուտորների

Պանիր և կաթնամթերք արտադրող Ֆրանսիական Աուվերնի շրջանում հիմնված ընկերությունը մասնագիտացած է կապույտ-բորբոս պանրի արտադրության բնագավառում: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ տարբեր երկրներից ապրանքի տարածման պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BOFR20160713002

Մնունդ և խմիչք արտադրող իսպանական ընկերությունը փնտրում է գործակալներ

Իսպանական ընկերությունը, որը մասնագիտացած է նրբաճաշակ սննդի և խմիչքի առևտրայնացման բնագավառում, ցանկանում է ընդլայնել իր բիզնեսը արտերկրում: Ընկերությունն առաջարկում է իսպանական առողջ, համեղ, բնական և բալանսավորված խոհանոցի լավագույն արտադրանքը: Ընկերությունը փնտրում է սննդի և խմիչք մատակարարներ՝ առևտրային համաձայնագիր կամ ապրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BOES20161223002

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական ընկերությունը, որը արտադրում է մրգային օշարակներ և ոչ ալկոհոլային խմիչքներ, փնտրում է հյուրերի, դրանց օրգանական բաղադրիչների, առանց խտանյութի հյուրեր մատակարարողների:

Լեհական ընկերությունը, որն արտադրում է բազմատեսակ մրգային և անուշաբույր օշարակներ, մրգային ըմպելիքներ ու նեկտարներ, պաստերիզացված հյուրեր և այլն, փնտրում է հյուրերի և դրանց օրգանական բաղադրիչներ մատակարարողների: Ընկերությանն անհրաժեշտ են նաև առանց խտանյութի հյուրեր: Ակնկալվում է կնքել

արտադրական համաձայնագիր:

Ծածկագիր. BRPL20170413001

Ավստրիական ընկերությունը, որը զբաղվում է սննդի առևտրով, փնտրում է ոչ ալերգիկ սնունդ մատակարարողների

Ավստրիական ընկերությունը, որը տեղակայված է հարավ-արևելյան Շտիրիայի շրջանում, փնտրում է ոչ ալերգիկ սննդի (չրեր և պահածոներ) մատակարարների, ովքեր ցանկանում են մուտք գործել Ավստրիական կամ Գերմանական շուկա, ինչպես նաև կենտրոնական կամ արևելյան Եվրոպա: Ընկերությունն ունի վաճառքի գործակալներ տվյալ տարածաշրջանի խանութներում:

Ծածկագիր. BRAT20160929001

Ռուսական ընկերությունը, որը զբաղվում է մթերքի վաճառքով, փնտրում է արտադրողներ և մատակարարներ

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է չոր սննդամթերքի արտադրության մեջ, ինչպես նաև զբաղվում է պարենային ապրանքների տարածմամբ, փնտրում է օտարերկրյա արտադրողների, որոնց հետ կարող է կնքել ապրանքի տարածման պայմանագիր:

Ծածկագիր. BRRU20160331001

Մեծ Բրիտանիայում տեղակայված ընկերությունը փնտրում է կոնյակ արտադրողի

Բրիտանական ընկերությունը, որը ալկոհոլային խմիչքների բնագավառում միջազգային փորձ ունի, մասնագիտացած է ալկոհոլային խմիչքների մատակարարման և տարածման գործում: Ներկայումս նրանք մշակում են զարեջրի և ալկոհոլային խմիչքների իրենց սեփական ապրանքանիշը և այս նոր նախաձեռնության համար փնտրում են գործընկեր, ով կունենա գործարան ու կկարողանա կոնյակ արտադրել նշված ընկերության համար՝ սպիտակ պիտակով: Ակնկալվում է կնքել արտադրական կամ ենթակապալառուի պայմանագիր:

Ծածկագիր. BRUK20160824002

Տեքստիլ արտադրություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Լիտվական ընկերությունը, որն արտադրում է բարձր որակի լվացվող (փափուկ) անկողնային սպիտակեղեն և հագուստ կանանց ու աղջիկների համար, փնտրում է առևտրի միջնորդների

Լիտվական ընկերությունը, որը զբաղվում է բարձր որակի լվացվող (փափուկ) անկողնային սպիտակեղենի և կանանց ու աղջիկների համար հագուստի արտադրությամբ, փնտրում է առևտրի միջնորդների (գործակալներ և դիստրիբյուտորներ) առևտրային համաձայնագիր կամ ապրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BOLT20160802001

Խորվաթական ընկերությունը, որը զբաղվում է տեքստիլի արտադրությամբ, առաջարկում է իր ծառայությունները այն ընկերություններին, ովքեր հետաքրքրված են ենթակապալառուի և աուրստրսինգային գործընկերոջ որոնման մեջ

Խորվաթական ընկերությունը, որը մասնագիտացած է երեխաների, դեռահասների, ինչպես նաև մեծահասակների և հղի կանանց համար տեքստիլի արտադրության մեջ, առաջարկում է իր ծառայությունները այն ընկերություններին ում հետաքրքրում է ենթակապալառուի և աուրստրսինգային պայմանագրերի կնքումը:

Ծածկագիր. BOHR20160922002

Տեքստիլ արտադրող ընկերությանն անհրաժեշտ են դիստրիբյուտորներ և գործակալներ

Տեքստիլ արտադրող չեխական ընկերությունը, որը մասնագիտացված է տան համար ձեռագործ իրերի պատրաստմամբ, մասնավորապես, նորաճ բարձերի և երեխաների համար նախատեսված դեկորատիվ բարձերի արտադրությամբ, փնտրում է գործակալների և դիստրիբյուտորների:

Ծածկագիր. BOCZ2015042100

Հունական ընկերությունը, որը մասնագիտացած է ավանդական կրետական տեքստիլի արտադրության մեջ, փնտրում է դիստրիբյուտորներին

Հունական ընկերությունը, որը տեղակայված է Կրետե կղզում, մասնագիտացած է ավանդական կրետական տեքստիլի (սփռոցներ և գոգնոցներ) արտադրության մեջ: Արտադրանքի զարդանախշերը և երկրաչափական տարբեր պատկերներն արտացոլում են բնության և ամենօրյա մարդկային գործունեությունը: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներին:

Ծածկագիր. BOGR20151214001

Ռուսական ընկերությունը, որն արտադրում է աշխատանքային հագուստ և տուրիստական սարքավորումներ, փնտրում է գործընկերներ՝ արտադրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով

Ռուսական ընկերությունը, որը գտնվում է Կրասնոյարսկում, մասնագիտացած է բացառապես բնական և էկոլոգիապես մաքուր հումքից արտադրված հագուստի, տուրիստական սարքավորումների (վրաններ, քնապարկեր, բաճկոններ, գլխարկներ, ձեռնոցներ, գուլպաներ), ինչպես նաև աշխատանքային հագուստի (ձկնորսության, որսի և սար մագլցելու համար ջրակայուն մեխանիզմով) արտադրության մեջ: Ընկերությունը ցանկանում է կնքել ապրանքի տարածման պայմանագիր:

Ծածկագիր. BORU20151003010

Բելգիական ընկերությունը, որը մասնագիտացած է տան համար բարձր որակի տեքստիլի արտադրության բնագավառում, փնտրում է դիստրիբյուտորներ

Բելգիական ընկերությունն առաջարկում է սեղանի բամբակյա մանրագործվածքների, խոհանոցային պարագաների՝ սփռոցների և բարձերի լայն տեսականի: Արտադրանքի տեսականին դասավորված է համապատասխան գույներով և թեմաներով: Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների՝ իր ապրանքի տարածման համար:

Գործարար համագործակցության հարցումներ

Մեծ Բրիտանիայում հիմնված ընկերությունը փնտրում է գործընկեր՝ սենսորային էկրանների և ակնոցների մաքրման համար տեքստիլային արտադրանք մշակելու համար

Մեծ Բրիտանիայում հիմնված ընկերությունն արտադրում է սենսորային էկրանների և ակնոցների մաքրման համար նախատեսված պոլիէսթերային թրթուրից պատրաստված իրեր: Ընկերությունը փնտրում է գործընկեր՝ համատեղ արտադրական պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BRUK20160621001

Դանիական ընկերությանն անհրաժեշտ է փայտից և մանրագործվածքից խաղալիքներ արտադրող

Դանիական ընկերությունը, մասնագիտացված խաղալիքների արտադրության ոլորտում փնտրում է գործընկերոջ, ով կարող է արտադրել մանրագործվածքից և փայտից պատրաստված խաղալիքներ երեխաների համար: Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրական պայմանագիր իր արտադրանքի աճը և ծավալը մեծացնելու համար:

Ծածկագիր. BRDK20170307001

Շինարարություն



Գործարար համագործակցության առաջարկներ

Ռումինական ընկերությունն առաջարկում է ենթակապալառուի ծառայություններ

Ռումինական ընկերությունը, որը բարձր որակավորում ունի, ինչպես նաև երկարատև փորձառություն բնակելի ու արդյունաբերական շինարարական ծառայությունների մատուցման բնագավառում, ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու եվրոպական այն երկրներում, որոնք ներգրավված են շինարարական գործունեության մեջ:

Ծածկագիր. BORO20170207001

Բուլղարական ընկերությունը փնտրում է շինարարական ոլորտում գործընկերների

Բուլղարական ընկերությունը, որը զբաղվում է շենքերի կառուցմամբ, փնտրում է գործընկերներ՝ ենթակապալառուի և ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելու համար: Ընկերությունն իրականացնում է շինարարական և կառուցապատման աշխատանքներ՝ հանրային մարմինների ու ձեռնարկությունների համար և առաջարկում է իր շինարարական թիմի և ենթակապալառուի աշխատանքը՝ նախագծերի իրականացման համար: Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է սեփական շինարարական սարքավորումներով:

Ծածկագիր. BOBG20170324001

Չեխական ընկերությունը փնտրում է գործընկերների շինարարական ոլորտում

Չեխական ընկերությունը, որն արտադրում է էկոլոգիական ամբողջական սենդվիչ պանելներ և կաշուն փայտե գերաններ, փնտրում է դիստրիբյուտորների և ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու շինարարական ընկերություններում:

Ծածկագիր. BOCZ20151208001

Գործարար համագործակցության հարցումներ

Լիտվական շինարարական ընկերությունն առաջարկում է ապրանքի տարածման ծառայություններ

Լիտվական ընկերությունը, որն իրականացնում է շինարարական նյութերի մեծ վաճառք, ցանկանում է ընդլայնել իր արտադրանքը և փնտրում է նոր մատակարարների, ինչպես նաև առաջարկում է ապրանքի տարածման ծառայություններ:

Ծածկագիր. BRLT20161005001

Փնտրվում են գործընկերներ՝ Ռուսաստանում բազմահարկ ավտոկայանատեղի կառուցելու

նպատակով

Լիպեցկի շրջանում գտնվող Ռուսական ընկերությունը զբաղվում է շինարարական գործունեությամբ: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ հետևյալ ուղղություններով՝ ենթակապալառուի ծառայություն իրականացնելու նպատակով. բազմաօժանոթ ավտոկայանատեղիի գծագրում, բեռնաբարձման սարքավորումների տեղադրման նկատմամբ վերահսկողության իրականացում և Լիպեցկի շրջանում ավտոկայանատեղիի համար վճարային համակարգերի ստեղծում:

Ծածկագիր. BRRU20160530001

R&D



H2020-MSCA-IF: Որոնվում է գիտելիքի բացահայտման և ճշգրիտ բժշկությամբ հետաքրքրվող բիո-հետազոտող մասնագետ

Իսպանական ՓՄՁ-ն, որը մասնագիտացած է հաշվողական կենսաբանության և կենսաինֆորմատիկայի ոլորտում, փնտրում է փորձառու բիո-հետազոտողի, որը կցանկանա միանալ MSCA-IF-2017 դիմումին՝ մասնակցելով գիտահետազոտական նախագծի թարգմանչական աշխատանքներին, որի նպատակն է մշակել նոր հարթակ գիտելիքի բացահայտման և ճշգրիտ բժշկության համար:

Ծածկագիր. RDES20170517002

Horizon 2020: Էլեկտրոնային առևտուր և լոգիստիկա տեղական շուկայի համար

Իտալական ընկերությունը, որը հանդիսանում է Horizon 2020 SME instrument Phase 1 ծրագրի շահառու, մշակել է առցանց հարթակ, որը օգնում է մթերային խանութներին շուկայում և փնտրում է գործընկերների, ում հետ կարող է դիմել սովյալ ծրագրի 2-րդ փուլին: Ընկերությունը փնտրում է գործընկերներ, որոնք աշխատում են լոգիստիկայի, փաթեթավորման, վճարային

համակարգերի ոլորտում և հետաքրքրված են առաջարկին միանալուն:

Ծածկագիր. RDIT20170314001

H2020 (SC6-co-creation-2016-2): Գերմանական SS ընկերությունը փնտրում է պետական կառավարման մարմինների և SS ծառայություններ մատուցող ընկերությունների Հորիզոն 2020 հաջող նախագծի առաջարկ ներկայացնելու նպատակով

Գերմանական SS ընկերությունը մասնակցում է հաջողությամբ ֆինանսավորված Հորիզոն 2020 նախագծին՝ հիմնվելով պետական կառավարման մարմինների մեկ անգամյա կամ OOP (once only principle) սկզբունքների վրա:

Նախագիծն արդեն մեկնարկել է, սակայն ընկերությունը փնտրում է լրացուցիչ գործընկերների, որոնք կինտեգրվեն նախագծի մեջ:

Նախագիծը փնտրում է պետական կառավարման մարմինների, որոնք պատրաստ են տալ լուծումներ և տիրապետել լավագույն հմտություններին, և SS ծառայություններ մատուցող ընկերություններ, որոնք կարող են կիսվել OOP սկզբունքների հնարավորությունների և խոչընդոտների վերաբերյալ փորձով:

Ծածկագիր. RDDE20170518001

M-ERA.NET 2017 – Ֆրանսիական տեխնոլոգիական կենտրոնը փնտրում է գործընկերներ՝ սմարթֆոնի վրա հիմնված սպեկտրոմետրի մշակման նպատակով

Բարձր կատարողականությամբ ֆրանսիական տեխնոլոգիական կենտրոնն աշխատում է լազերային լուծույթների և օպտիկայի ոլորտում: Ի պատասխան M-ERA.NET 2017 միջազգային հարցմանը, տեխնոլոգիական կենտրոնը փնտրում է սպեկտրոսկոպիայի, քիմիական չափումների, կոլորիմետրիկայի և իմուն ֆերմենտների ոլորտում փորձառություն ունեցող գործընկերների: Փնտրվող գործընկերները հետազոտական հաստատություններն են, ինչպես նաև արդյունաբերական կենտրոնները, ՓՄՁ-ները և խոշոր ընկերությունները, որոնք փորձառություն ունեն տվյալ ոլորտներում և կարող են հետազոտության համագործակցության համաձայնագրի միջոցով մշակել ամփոփ սպեկտրոմետրի հավելվածներ:

Ծածկագիր. RDFR20170419001

H2020- EE-15-2017: Փնտրվում է էներգաարդյունավետության ցիկլի մեջ ներգրավված

արդյունաբերական ասոցիացիա

Իսպանական հետազոտական ընկերությունը Հորիզոն 2020-EE-15 նախագծի համար պատրաստում է առաջարկ՝ կապված էներգաարդյունավետության հետ: Նախագծի նպատակն է ուսումնասիրել էներգաարդյունավետության որոշումների մեջ ներգրավված տարբեր պրոֆիլների վարքագիծը էներգաարդյունավետության ներդրումների վերաբերյալ համապատասխան խորհուրդներ տալու նպատակով: Փնտրվում է էներգաարդյունավետության ցիկլի մեջ ներգրավված արդյունաբերական ասոցիացիա, որը հանդես կգա որպես կապող օղակ՝ հնարավոր օգտատերերի լուծումների համար:

Ծածկագիր. RDES20170403001

Տեղեկատվական տեխնոլոգիաներ



Գործարար համագործակցության առաջարկներ

SS որոնում մասնագիտացած ընկերությունը ցանկանում է հանդես գալ որպես ենթակապալառու օտարերկրյա ընկերության համար

Տրանսիլվանիայում գտնվող ռումինական ընկերությունը, որն ունի 10 տարվա աշխատանքային և անդրազգային համագործակցության փորձ, ցանկանում է հանդես գալ օտարերկրյա ընկերությունների համար որպես ենթակապալառու՝ բջջային հեռահաղորդակցման ծրագրային լուծումների ապահովման (ներառյալ հավելվածների և բջջային հեռահաղորդակցման ենթակառուցվածքների մշակում) և այլ SS ծառայությունների մատուցման համար:

Ծածկագիր. BORO20160526001

Անկանխիկ վճարային համակարգերի համար SS լուծումներ ապահովող լեհական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների

Լեհական ընկերությունը, որը հանդիսանում է SS ծրագրային լուծումների ապահովող Smart City, Smart Payments and Smart Energy Grid ոլորտներում, առաջարկում է անկանխիկ վճարային համակարգերի ծրագրային և ապարատային արտադրանք: Ընկերությունն

առաջարկում է համագործակցություն (առևտրային գործակալության կամ ծառայությունների մատուցման պամանագրի կնքում) այն SS ընկերություններին, որոնք հետաքրքրված են համակարգի ներդրմամբ:

Ծածկագիր. BOPL20170329002

Ֆրանսիական ընկերությունը փնտրում է գործակալների, ովքեր կարող են տարածել տեղեկատվության դասակարգման և կազմակերպման ծրագիր

Ֆրանսիական ընկերությունը ներկայացնում է տեղեկատվության և փաստաթղթերի կազմակերպման համակարգերի ծրագիր պաշտպանված վեր-կայքում՝ ծրագրային ապահովումը որպես ծառայություն ռեժիմում: Ծրագրային ապահովումը տալիս է լայնամասշտաբ տեղեկատվություն գործնական միջավայրի, ինչպես նաև կազմակերպության ցանկացած գործունեության ոլորտի վերաբերյալ: Համակարգը հեշտ կառավարելի է և անվտանգ: Ընկերությունը ցանկանում է կնքել ապրանքի տարածման պայմանագիր:

Ծածկագիր. BOFR20150925001

Գործարար համագործակցության հարցումներ

Ռուսական ընկերությանը անհրաժեշտ է գործընկեր, որը կարող է մշակել ծրագրային ապահովման համակարգ՝ մարդկային ռեսուրսների կառավարման համար

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մարդկային ռեսուրսների կառավարման ավտոմատացման և ատեստավորման ծրագրային համակարգերի ապահովման ինչպես նաև էլեկտրոնային դասավանդման համար նախատեսված ուսոցողական նյութերի մշակման ուղղությամբ փնտրում է մարդկային ռեսուրսների կառավարման համար ծրագրային ապահովման համակարգեր մշակողների: Նախատեսվում է կնքել լիցենզային պայմանագիր:

Ծածկագիր. BRRU20160822001

Կոսմետիկա



Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական կոսմետիկա արտադրող ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների

Լեհական ընկերությունը, որն արտադրում է կոսմետիկ խնամքի միջոցներ (շրթներկեր, փայլեր, մատիտներ, եղունգների ներկ, ստվերաներկ, դիմակներ, դեմքի քսուկներ և այլն) և մաշկի խնամքի միջոցներ (կրեմներ, լոսիոններ, լոզանքի գելեր, փրփուրներ, մաքրող քսուկներ), փնտրում է արտերկրում իր ապրանքը տարածողների:

Ծածկագիր. [BOPL20160802001](#)

Լեհական ընկերությունն առաջարկում է դերմոկոսմետիկա

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է օրգանական բնական կոսմետիկ միջոցների արտադրության մեջ, փնտրում է իր ապրանքը իրենց շուկայում տարածողների:

Ծածկագիր. [BOPL20170505003](#)

Կոսմետիկ խնամքի միջոցներ արտադրողը խորվաթական ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորների՝ իր նոր կոսմետիկ միջոցները տարածելու նպատակով

Խորվաթական ընկերությունը, որն արտադրում է մազի, ոտքերի, մարմնի և դեմքի մաշկի համար բնական կոսմետիկ միջոցներ, փնտրում է դիստրիբյուտորների՝ իր նոր կոսմետիկ գծի արտադրանքի համար, որը պատրաստված է հատուկ բույսից և ունի երիտասարդեցնող ազդեցություն:

Ծածկագիր. [BOHR20160922003](#)



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ առևտրային և ապրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով

Համաշխարհային ճանաչում ունեցող բրիտանական ընկերությունը, որը մասնագիտացած է բնական բուսական միջոցներից պատրաստված դեղահաբերի արտադրության բնագավառում, փնտրում է առևտրային գործակալների՝ իր արտադրության ծավալները միջազգայնորեն ընդլայնելու համար:

Ծածկագիր. BOUK20151104001

Մակեդոնական դեղագործական ընկերությունը փնտրում է ապրանքի տարածման գործակալների

Մակեդոնական դեղագործական ընկերությունը, որը հիմնադրվել է 1998թ., արտադրում է բացառապես բուսական հիմքով պատրաստված դեղահաբեր: Ընկերությունն ունի իր անձնական ապրանքանիշով հակաբաղցկեղային արտադրանք: Ընկերությունը փնտրում է գործընկերներ՝ իր արտադրանքը այլ երկրներ արտահանելու նպատակով:

Ծածկագիր. BOMK20160912002

Գործարար համագործակցության հարցումներ

Արտադրողը փնտրում է գործընկերներ՝ մարդու համար նախատեսված բժշկական սննդային արտադրանքի համար:

Առաջատար իսրայելյան ընկերությունը, որը մասնագիտացած է բժշկական սննդային հավելումների մշակման, արտադրության և մարքեթինգի բնագավառում, ցանկանում է համագործակցել մանկական և բժշկական սննդային հավելումների մշակմամբ, արտադրությամբ և մարքեթինգով զբաղվող կազմակերպության հետ: Ակնկալվում է կնքել ֆինանսական համաձայնագիր և համատեղ ձեռնարկություն ստեղծելու պայմանագիր:

Ծածկագիր. BRIL20160310001

Այլ ոլորտներ



Business Support on Your Doorstep

Գործարար համագործակցության առաջարկներ

Լեհական ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները որպես ենթակապալառու

Լեհական ընկերությունը, որը մասնագիտացած է կահույքի և այլ փայտյա իրերի (ղոմեր, սեղաններ, պահարաններ, անկողիններ) անհատական պատվերների արտադրության մեջ, ցանկանում է երկարաժամկետ համագործակցություն հաստատել որպես ենթակապալառու՝ շինարարական ոլորտում և կահույքի արտադրությամբ զբաղվող ընկերությունների հետ:

Ծածկագիր. BOPL20170105002

Ընկերությունը փնտրում է դիստրիբյուտորներ և առևտրային գործընկերներ

Իտալական ընկերությունը, որն արտադրում և նախագծում է մետաղական հատիչ գործիքներ, փնտրում է միջազգային գործակալների և հաճախորդների՝ նրանց հետ

ենթապայմանագրային համաձայնագիր կնքելու նպատակով: Ընկերությունն արտադրում է ծորակներ, տարբեր չափերի պտուտակներ, որոնք օգտագործվում են մեքենաների և կահույքի պատրաստման ժամանակ:

Ծածկագիր. BOIT20160405002

Ընկերությունը փնտրում է առևտրային գործակալության ծառայություններ

20 տարիների ընթացքում գործող բուլղարական զբոսաշրջային օպերատոր հանդիսացող ընկերությունը, որը կազմակերպում է արձակուրդային փաթեթներ դեպի Բուլղարիա, մասնավորապես դեպի Սև Ծով և Բուլղարական լեռնադաշտային և առողջարանային շրջաններ, ինչպես նաև իրականացնում է մասնագիտացած խմբերի և անհատների գործուղումներ դեպի Բուլղարիա: Ընկերությունը վաճառում է նաև զբոսաշրջային փաթեթներ՝ արտասահմանում գտնվող բուլղարացի զբոսաշրջիկներին: Ընկերությունը ցանկանում է համագործակցել զբոսաշրջային գործակալությունների, հյուրանոցների հետ:

Ծածկագիր. BOBG20151029001

Ընկերությունն առաջարկում է իր ծառայությունները որպես ենթակապալառու

Իսպանական ընկերությունն առաջարկում է իր փորձը նորաձևությամբ զբաղվող այն ընկերություններին, որոնք փնտրում են ենթակապալառու արտադրական պրոցեսի կազմակերպման, ինչպես նաև մետաղական բաղադրիչների, աքսեսուարների, զարդերի պատրաստման համար:

Ծածկագիր. BOES20151014001

Գործարար համագործակցության հարցումներ

Լեհական ընկերությունը, որն արտադրում է հագուստի կախիչներ և կահույքի աքսեսուարներ, փնտրում է պլաստիկ արտադրողներ

Լեհական ընկերությունը, մասնագիտացած պլաստմասե իրերի մշակմամբ, ցանկանում է համագործակցել օտարերկրյա գործընկերոջ հետ, ով կարող է ապահովել իրենց պլաստիկ արտադրանքով, ինչպիսիք են՝ պոլիպրոպիլենը, պոլիստիրոլը, ABS պլաստիկը, ցածր խտության պոլիէթիլենը, ինչպես նաև բարձր խտության պոլիէթիլենը: Ակնկալվում է կնքել արտադրական պայմանագիր:

Ծածկագիր. BRPL20160824001

Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրանքի տարածման պայմանագիր

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մետաղական իրերի արտադրությամբ և դրանց տարածմամբ, փնտրում է հատիչ գործիքներ և մետաղ մշակող սարքավորումներ արտադրողների և մատակարարների՝ նրանց հետ արտադրանքի տարածման պայմանագիր կնքելու համար:

Ծածկագիր. BRRU20161114001

Գործարար համագործակցության հարցումներ

Արտադրողը փնտրում է գործընկերներ

Պերմ քաղաքում գործող ռուսական ընկերությունը մատակարարում է բժշկական սպասարկման սարքավորումներ՝ ֆիզիոթերապիայի, վերականգնողական, պրոֆեսիոնալ թերապիաների համար: Ընկերությունը փնտրում է եվրոպայում բժշկական սարքավորումներ արտադրողների կոնտակտներ՝ տարածման ծառայությունների համաձայնագրեր հաստատելու նպատակով:


Ծածկագիր. BRGE20170208001

Ընկերությունը ցանկանում է կնքել արտադրանքի տարածման պայմանագիր

Ռուսական ընկերությունը, որը մասնագիտացած է մետաղական իրերի արտադրության և դրանց տարածման բնագավառում, փնտրում է հատիչ գործիքներ և մետաղ մշակող սարքավորումներ արտադրողների և մատակարարների՝ նրանց հետ արտադրանքի տարածման պայմանագիր կնքելու նպատակով:

Ծածկագիր. BRRU20161114001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ և առաջարկներ



Տեխնոլոգիական համագործակցության առաջարկներ

Շարժական բժշկական սարքավորում նյութափոխանակության և այլ խրոնիկ հիվանդությունների խնդրին ուղղված, որը կարգավորում է նաև քաշի նվազեցումը

Հարավ-Արևմտյան բրիտանական ընկերությունը մշակել է շարժական սարքավորում, որը չափում է նյութափոխանակությունը: Սարքը մի գործիք է, որը հնարավորություն է տալիս բուժանձնակազմին տրամադրել անհատականացված և բարձրակարգ սննդային միջամտություն՝ քաշի արդյունավետ նվազեցման համար: Փնտրվում են գործընկերներ՝ տեխնոլոգիան միջազգային շուկայում գործարկելու համար:

Ref: TOUK20170413001

Աճի խթանիչ՝ բիո բանջարեղենի, մրգի, որթատունկի և այլ մշակաբույսերի համար

Չեխական ընկերությունը մշակել է բարձր որակի օրգանական աճի խթանիչ՝ բիո բանջարեղենի, մրգի, որթատունկի և այլ մշակաբույսերի համար, որը կիրառվում է հողի և բույսերի տերևների վրա: Ընկերությունը փնտրում է օրգանական բանջարեղեն, միրգ և մշակաբույսեր արտադրողների, ովքեր հետաքրքրված կլինեն տվյալ ապրանքի կիրառմամբ: Ակնկալվում է կնքել առևտրային պայմանագիր՝ տեխնիկական աջակցությամբ:

Ref: TOCZ20170512001

Տեխնոլոգիական համագործակցության հարցումներ

Ընկերությունը, որն արտադրում է ոսկյա իրեր, փնտրում է ոսկու և արծաթի վերամշակման նոր տեխնոլոգիա:

Տիրանայում գործող ալբանական ընկերությունը զբաղվում է ոսկյա և արծաթե իրերի վերամշակմամբ և պատրաստմամբ: 25 տարվա փորձ ունեցող ընկերությունը փնտրում է գործընկեր, ով կարող է ապահովել տեխնոլոգիական նոր գիծ՝ ոսկյա և արծաթյա իրերի վերամշակման համար: Ակնկալվում է կնքել առևտրային պայմանագիր տեխնիկական աջակցությամբ, ինչը կնպաստի ընկերության մրցունակության բարձրացմանը՝ մատչելի գնով զարդերի նոր տեսականու ստեղծման միջոցով:

Ref: TRUK20170323001

Եվրոպական նորություններ և միջոցառումներ

Ձեռնարկությունների եվրոպական ցանցի շրջանակներում կազակերպվում են բազմաթիվ միջոցառումներ, որոնք հնարավորություն են ընձեռում գործարարներին հանդիպելու հավանական գործընկերների հետ և ստանալու անհրաժեշտ տեղեկություններ՝ եվրոպական շուկա մուտք գործելու համար:

Ստորև ներկայացվում են 2017 թ. -ի հուլիս, օգոստոս, սեպտեմբեր ամիսների ընթացքում կազմակերպվող միջոցառումները:

Հուլիս

03/07/2017	<p>Networking Session at the 7th International Digital Health Conference 2017 in London</p> <p>London (United Kingdom)</p> <p>Թվային առողջապահության միջոցառումները հետազոտության հնարավորությունները մերձեցնում են համակարգչային գիտությունները՝ զգալիորեն բարելավելու համար հասարակական առողջապահությունը, գլոբալ առողջապահությունը և անհատների բարեկեցությունը, որոնք գլոբալ առումով արտահերթ են:</p>
------------	--

Օգոստոս

22/08/2017	<p>gamesmatch@gamescom 2017 - Matchmaking event for the games industry Cologne (Germany)</p> <p>Այս միջոցառումը ամենամեծ առևտրային ցուցահանդեսն է և միջոցառումը, որը նվիրված է խաղերի ոլորտին: Խաղեր մշակող ընկերությունները միջոցառման ընթացքում կներկայացնեն իրենց վերջին արտադրանքը և թողարկումները, ինչպես նաև փնտրում են հետագա ծրագրեր ու գործընկերներ:</p>
------------	--

Սեպտեմբեր

19/09/2017	<p>BROKERAGE EVENT - TECHINNOVATION 2017 Singapore (Singapore)</p> <p>Այս միջոցառումը տեխնոլոգիա-արդյունաբերություն ոլորտի առաջատար միջոցառումներից է: Այն կազմակերպվում է այնպսիս ընկերությունների համար, որոնք փորձում են գտնել նոր նորարարական և տեխնոլոգիական լուծումներ՝ ուղղված իրենց բիզնեսի կարիքների լուծմանը: Միջոցառումը հնարավորություն է տալիս հաստատել նոր բիզնես կամ տեխնոլոգիական համագործակցություն, կամ համագործակցել՝ մշակելու համար նորարարական ապրանքներ և ծառայություններ:</p>
26/09/2017	<p>International matchmaking event at Polagra Food Fair Poznan (Poland)</p> <p>Համագործակցության հաստատման այս միջոցառումն ուղղված է ՓՄՁ-ներին և այլ անհատներ, ովքեր ներկայացնում են սննդի ոլորտը և հետաքրքրված են միջազգային կապերի հաստատմամբ:</p> <p>Ոլորտները հետևյալն են՝</p> <ul style="list-style-type: none"> • Սննդամթերք և խմիչքներ • Հյուրանոցներ, ռեստորաններ, հասարակական սննդի կետեր • Սննդի մշակման տեխնոլոգիաներ • Փաթեթավորում և լոգիստիկա:

Վերոհիշյալ միջոցառումների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվություն ստանալու համար խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան:

Նշում: Եթե *Դուք փնտրում եք գործընկեր արտասահմանում կամ նոր շուկա՝ և ցանկություն ունեք ներգրավվել ցանցի տվյալների բազայում, խնդրում ենք դիմել ՁԵՑ Հայաստան՝ համագործակցության հայտաձևեր և այլ համապատասխան տեղեկատվություն ստանալու համար:*

Հարգելի գործարար,

Գրանցվեք հետևյալ հղմամբ՝

<http://een.ec.europa.eu/tools/services/ExpressionOfInterest/Customer/Create?shid=32db25cb-726f-43b0-8b5f-7742d0935799> և ստացեք անվճար

հաղորդագրություններ Ձեր էլեկտրոնային փոստին նոր գրանցված բիզնես առաջարկների, միջազգային միջոցառումների վերաբերյալ:

Մատուցվող բոլոր ծառայություններն ու տեղեկատվությունն անվճար են: